**«Հանուն Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագիր**

*Ատելության խոսքի վերհանմանն ուղղված ինտերնետ մոնիթորինգի արդյունքների վերլուծություն*

«Հանուն Հայաստանի երիտասարդության շրջանում արմատականացման, այլատյացության և ատելության քարոզի հաղթահարման» ծրագրի շրջանակներում ինտերնետ մոնիթորինգը իրականացվել է երիտասարդության շրջանում արմատականացման և ատելության խոսքի/քարոզի դրսևորումների ծավալները և դրանց պատճառները պարզելու նպատակով: Հետազոտությունը հետախուզական է, ինչը նշանակում է, որ ուսումնասիրության ավարտին կարող են նոր հետազոտական հարցեր կամ վարկածներ առաջ քաշվել, որոնց ստուգումը ենթադրում է նոր՝ առավել մանրամասն ուսումնասիրությունների իրականացում:

Նախքան հետազոտության արդյունքներին անդրադառնալը անհրաժեշտ է նախ նշել, թե ինչ հիմնական կատեգորիաներ են կիրառվել հետազոտության ընթացքում: Այս առումով, առաջնահերթ կարևորության է նշել, որ, ըստ սահմանման, «Ատելության խոսք եզրույթը պարունակում է խոսքի դրսևորման բոլոր այն ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմականությունը կամ ատելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականությունը, ցեղակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը և ընդդեմ փոքրամասնությունների, միգրանտների և ներգաղթյալ անձանց նկատմամբ թշնամանքը և խտրականությունը» [Հայաստանի Հելսինկյան Կոմիտե, Ատելության խոսքի մշտադիտարկում, 2018]:

Կարևոր է հաշվի առնել ատելության խոսքի դրսևորմանը մասնակից բոլոր կողմերին, մասնավորապես ատելության սուբյեկտներին, այլ կերպ ասած՝ ում/ինչին է հասցեագրված ատելության խոսքը: Նրանց շարքում կարող են լինել կոնկրետ անձինք, անձանց խմբեր, երևույթներ և այլն: Ընդ որում որոշ խմբեր հատկապես հաճախ են դառնում ատելության խոսքի թիրախ/զոհ:

Տվյալ հետազոտության շրջանակներում առավել հստակեցնելու համար հետազոտության օբյեկտը և ատելության սուբյեկտներին առանձնացվել են 4 ոլորտներ՝

քաղաքական, կրոնական, սեռական, մշակութային, որոնց թեմատիկ ուղղություններին առնչվող հրապարակումներն էլ դիտարկվել են ուսումնասիրության շրջանակներում: Սրանք այն ոլորտներն են, որոնք հատկապես խոցելի են ատելության խոսքի տեսանկյունից, և ատելության խոսքի սուբյեկտներ հաճախ են դառնում տվյալ ոլորտների մաս կազմող անձինք կամ անձանց խմբեր:

Ինչպես նաև առանքային է, թե ովքեր են ատելության խոսք տարածողները, ընդ որում նրանք կարող են լինել հայտնի կամ ոչ հայտնի անձինք, ինչպես նաև այնպիսիք, որ չեն ցանկանում բացահայտվել և մնում են անանուն: Նույն անձի կողմից ատելությունը կարող է տարածվել իրավիճակային կամ կանոնավոր. վերջինի դեպքում այն արդեն վերածվում է ատելության քարոզի: Ատելության քարոզը իր երանգավորմամբ տարբերվում է ատելության խոսքից այն առումով, որ այն ևս արտահայտում է անհանդուրժողականության վրա հիմնված ատելության ձևերը՝ հատկապես մեծ շեշտ ունենալով ատելությունը տարածելու և դիմացինին հասցնելու կոնպոնենտների վրա:

Տվյալ հետազոտության շրջանակներում որպես թիրախային խումբ, այսինքն՝ ատելություն տարածողներ, դիտարկվել են 9-12 դասարանների աշակերտները, սոցիալական ցանցերում (տարբեր խմբերում եւ սեփական էջերում) ակտիվ հետդպրոցական տարիքի՝ մինչեւ 30 տարեկան երիտասարդությունը, ներառյալ՝ բուհերում եւ միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորող երիտասարդությունը: Այսինքն, ընդհանուր առմամբ թիրախային խումբը 15-30 տարեկան երիտասարդներն են: Ֆեյսբուքյան մեկնաբանությունների պարագայում դիտարկվել են միայն նշված տարիքային խմբի կողմից ատելության խոսք պարունակող գրառումները: Սա իրականում նպատակ ուներ դիտարկել որոշակի տենդենցներ ատելության խոսքի մասին՝ ըստ տարիքի և սեռի, մինչդեռ դժվարություն է առաջացնում հատկապես ֆեյսբուքյան օգտատերերի փակ հաշիվներով մեկնաբանություններ գրելը, որի պարագայում միայն մոտավոր է հնարավոր լինում հասկանալ, որ տվյալ անձը ծրագրին հետաքրքրող տարիքային խմբին է պատկանում: Այս առումով, հաշվի առնելով նման դեպքերի մեծաքանակությունը, որևէ հստակ նկարագիր տարիքի և մեկնաբանությունների միջև հնարավոր չէ դուրս բերել՝ սահմանափակվելով միայն սեռի և մեկնաբանությունների միջև նկարագրի դուրս բերմամբ:

Առանձին հիշատակման արժանի է «ֆեյք» հաշիվների առկայությունը և նրանցով մեկնաբանությունների տարածումը: Սա վերևում նկարագրված՝ անանուն մնացողների խումբն է: «Ֆեյք» հաշիվները աչքի են ընկնում լուսանկարների բացակայությամբ, տարօրինակ անուններով՝ հաճախ պարզապես տառերի պատահական

հաջորդականություն ունեցող, ընկերների քչաքանակությամբ կամ այլ «ֆեյք» հաշիվների շնորհիվ ընկերների համալրվածությամբ կամ այլ բնութագրիչներով։ Հնարավոր համարելով այն, որ գուցե նշված հաշիվների իրական օգտատերերը ծրագրին հետաքրքրող խմբից են, միևնույնն է, այս մեկնաբանությունները դուրս են մնացել ուսումնասիրությունից, քանի որ հնարավորություն չէր լինելու վերջում որևէ կերպ կապ ցույց տալ մեկնաբանության և այն գրողի միջև։

Ատելության խոսքի լսարանը ևս առանցքային խումբ է, ընդ որում՝ ամենամեծը։ Նրանք բոլորը ականատեսն են նրա, թե ինչպես է ատելության խոսքը դրսևորվում։ Լսարանը կարող են կազմել թե՛ ատելություն տարածողների և ստացողների ծանոթները, թե՛ պարզապես անծանոթ մարդիկ։ Հատկապես, երբ խոսքը վերաբերում է ինտերնետային տիրույթում ատելության խոսքի տարածմանը, ինչպես այս հետազոտության դեպքում է, ակնհայտ է դառնում վերևում նկարագրված մեծ լսարանը։ Օրինակ՝ լրատվական կայքերում կամ դրանց ֆեյսբուքյան հրապարակումների մեկնաբանություններում հնչող ատելության խոսքերը ակնհայտորեն մեծ լսարանի աչքի առաջ են, և յուրաքանչյուր մեկնաբանություն ընթերցում են ամենատարբեր կատեգորիայի բազմաթիվ անձինք։

Հետազոտության շրջանակներում առանձնացված 6 կայքերում (2 իշխանամետ՝ armtimes.com, factor.am, 2 չեզոք՝ civilnet.am, azatutyun.am, 2 ընդդիմադիր՝ news.am, tert.am) դիտարկվող 4 ոլորտներից՝ քաղաքական, կրոնական, մշակութային, սեռական, յուրաքանչյուրից դիտարկվել են 3-ական նյութ կայքում, այնուհետև այդ նույն նյութերի ֆեյսբուքյան գրառումների մեկնաբանությունները։ Արդյունքում ուսումնասիրվել է թվով 144 հրապարակում։ Ընդ որում, ի սկզբանե ընտրվել են կայքերում հրապարակումները, այնուհետև նույն հրապարակումների ֆեյսբուքյան մեկնաբանությունները. նույն հրապարակման համար և՛ կայքի գրառման, և՛ ֆեյսբուքյան մեկնաբանության դիտարկումը կարևոր է, քանի որ միայն այդկերպ հնարավոր կլինի ստանալ համեմատական պատկեր։ Այս է պատճառը, որ որոշ հրապարակումների պարագայում բացակայում է վերջիններիս՝ ֆեյսբուքում առկայությունը կամ մեկնաբանությունները։

Ժամանակագրական առումով ուսումնասիրվել են 2018թ. հունիսից մինչև 2019 թ. ապրիլ հրապարակված նյութերն ու գրառումները։ Ընդ որում, առանձին ոլորտների պարագայում ուսումնասիրվող ժամանահատվածում հնարավոր է որևէ կայքում քիչ քանակությամբ հրապարակումներ լինեն, կամ այդ հրապարակումները վերաբերեն քիչ թվով իրադարձությունների, ուստի փորձ է արվել նյութերի ընտրությունն իրականացնելիս ապահովել թեմատիկ բազմազանությունը։ Որոշ կայքերի պարագայում

եղել են նաև դեպքեր, երբ կոնկրետ ոլորտի համար ուսումնասիրվող ժամանակահատվածում եղել են միայն դիտարկված 3 հրապարակումները։

Արդյունքում, կայքերում ուսումնասիրվել են հետևյալ քանակությամբ նյութեր՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Կրոնական | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Մշակութային | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Սեռական | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |

Այդ նյութերից ատելության խոսք պարունակող են՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Կրոնական | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Մշակութային | 3 | 3 | 3 | 3 | 3 | 3 |
| Սեռական | 2 | 3 | 3 | 3 | 3 | 3 |

Ֆեյսբուքում ուսումնասիրվել են հետևյալ քանակությամբ մեկնաբանություններ՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 96 | 9 | 11 | 1 | - | 99 |
| Քաղաքական | - | 29 | 39 | 489 | 208 | 2 |
| Քաղաքական | - | 0 | 151 | - | 33 | - |
| Կրոնական | - | 38 | 7 | 7 | 39 | 16 |
| Կրոնական | - | 1 | 4 | 8 | 0 | 13 |
| Կրոնական | - | 0 | 24 | 4 | 40 | - |
| Մշակութային | 93 | 0 | 30 | 2 | 4 | 50 |
| Մշակութային | - | 2 | 1 | 1 | 5 | 1 |
| Մշակութային | - | 37 | 0 | 2 | 0 | 0 |
| Սեռական | - | 76 | - | 14 | 20 | 3 |
| Սեռական | - | 1 | 10 | 17 | 12 | 16 |
| Սեռական | 304 | 43 | 0 | 2 | 227 | 0 |

Այդ մեկնաբանություններից ատելության խոսք պարունակող են՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 7 | 3 | 3 | 0 | - | 6 |
| Քաղաքական | - | 5 | 4 | 13 | 12 | 0 |
| Քաղաքական | - | 0 | 7 | - | 5 | - |
| Կրոնական | - | 7 | 0 | 3 | 5 | 4 |
| Կրոնական | - | 1 | 2 | 1 | 0 | 4 |
| Կրոնական | - | 0 | 4 | 1 | 7 | - |
| Մշակութային | 5 | 0 | 1 | 1 | 2 | 6 |
| Մշակութային | - | 1 | 0 | 0 | 2 | 1 |
| Մշակութային | - | 6 | 0 | 1 | 0 | 0 |
| Սեռական | - | 7 | - | 4 | 5 | 1 |
| Սեռական | - | 0 | 5 | 2 | 2 | 5 |
| Սեռական | 7 | 6 | 0 | 0 | 8 | 0 |

Վերևում նշվեց կայքերի՝ ատելության խոսք պարունակող գրառումների ընդհանրացված պատկերը՝ ըստ ոլորտների դիտարկելիս, իսկ այդ հրապարակումների ֆեյսբուքյան մեկնաբանություններում ոլորտային բաշխվածությունը ընդհանրացված դիտարկելով, ակներև է դառնում հետևյալ պատկերը՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 7 | 8 | 14 | 13 | 17 | 6 |
| Կրոնական | 0 | 8 | 6 | 5 | 12 | 8 |
| Մշակութային | 5 | 7 | 1 | 2 | 4 | 7 |
| Սեռական | 7 | 13 | 5 | 6 | 15 | 6 |

Այ կերպ ասած՝ տվյալ կայքում յուրաքանչյուր ոլորտից դիտարկվել են նշված թվով մեկնաբանություններ: Ինչ վերաբերում է այդ մեկնաբանությունների սեռային բաշխվածությանը, ապա պատկերն այսպիսին է՝

| | Azatutyun.am | | Civilnet.am | | Factor.am | | Armtimes.com | | News.am | | Tert.am | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ |
| Քաղաքական | 4 | 3 | 4 | 4 | 4 | 10 | 4 | 9 | 9 | 8 | 4 | 2 |
| Կրոնական | 0 | 0 | 1 | 7 | 3 | 3 | 2 | 3 | 7 | 5 | 3 | 5 |
| Մշակութային | 4 | 1 | 5 | 2 | 0 | 1 | 2 | 0 | 3 | 1 | 3 | 4 |
| Սեռական | 5 | 2 | 6 | 7 | 5 | 0 | 3 | 3 | 5 | 10 | 3 | 3 |

Սակայն հարկ է նաև նշել, որ մեկնաբանությունների պարագայում կան այնպիսիք, որոնք մեկից ավելի ատելության խոսք պարունակող միտք են իրենց մեջ պարունակում: Արդյունքում՝ նույն մեկնաբանության մեջ հնչող բոլոր ատելության խոսք պարունակող մտքերը ուսումնասիրության են ենթարկվել: Հանրագումարային դիտարկելով՝ հետևյալ քանակությամբ ատելության խոսք պարունակող միտք է ուսումնասիրվել հետազոտության շրջանակներում՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 13 | 5 | 7 | 0 | - | 12 |
| Քաղաքական | - | 9 | 9 | 40 | 21 | 0 |
| Քաղաքական | - | 0 | 14 | - | 8 | - |
| Կրոնական | - | 17 | 0 | 8 | 9 | 6 |
| Կրոնական | - | 3 | 6 | 1 | 0 | 13 |
| Կրոնական | - | 0 | 6 | 3 | 15 | - |
| Մշակութային | 9 | 0 | 1 | 1 | 3 | 13 |
| Մշակութային | - | 1 | 0 | 0 | 5 | 2 |
| Մշակութային | - | 8 | 0 | 1 | 0 | 0 |
| Սեռական | - | 19 | - | 11 | 15 | 2 |
| Սեռական | - | 0 | 8 | 6 | 2 | 7 |
| Սեռական | 11 | 15 | 0 | 0 | 15 | 0 |

Հատկապես հետաքրքիր է այդ մեկնաբանությունների հեղինակների սեռային բաշխվածությունը՝

| | Azatutyun.am | | Civilnet.am | | Factor.am | | Armtimes.com | | News.am | | Tert.am | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ | ար | իգ |
| Քաղաքական | 8 | 5 | 1 | 4 | 0 | 7 | 0 | 0 | - | - | 9 | 3 |
| Քաղաքական | - | - | 5 | 4 | 1 | 8 | 10 | 30 | 8 | 13 | 0 | 0 |
| Քաղաքական | - | - | 0 | 0 | 6 | 8 | - | - | 5 | 3 | - | - |
| Կրոնական | - | - | 5 | 12 | 0 | 0 | 6 | 2 | 6 | 3 | 2 | 4 |
| Կրոնական | - | - | 0 | 3 | 1 | 5 | 0 | 1 | 0 | 0 | 6 | 7 |
| Կրոնական | - | - | 0 | 0 | 3 | 3 | 0 | 3 | 7 | 8 | - | - |
| Մշակութային | 8 | 1 | 0 | 0 | 0 | 1 | 1 | 0 | 3 | 0 | 7 | 6 |
| Մշակութային | - | - | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 3 | 2 | 0 | 2 |
| Մշակութային | - | - | 6 | 2 | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| Սեռական | - | - | 11 | 8 | - | - | 6 | 5 | 2 | 13 | 2 | 0 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սեռական | - | - | 0 | 0 | 8 | 0 | 2 | 4 | 0 | 2 | 2 | 5 |
| Սեռական | 8 | 3 | 6 | 9 | 0 | 0 | 0 | 0 | 8 | 7 | 0 | 0 |

Կայքերի գրառումների պարագայում միևնույն նյութում մեկից ավելի ատելության խոսք պարունակող մտքի առկայության դեպքերը ավելի քիչ են: Նշված մտքի թվային պատկերումը հետևյալն է՝

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 5 | 2 | 5 | 4 | 4 | 5 |
| Քաղաքական | 4 | 3 | 3 | 4 | 3 | 2 |
| Քաղաքական | 5 | 5 | 5 | 5 | 3 | 3 |
| Կրոնական | 5 | 5 | 2 | 5 | 2 | 3 |
| Կրոնական | 5 | 5 | 3 | 5 | 3 | 3 |
| Կրոնական | 4 | 2 | 3 | 5 | 4 | 4 |
| Մշակութային | 3 | 4 | 5 | 3 | 5 | 5 |
| Մշակութային | 3 | 2 | 3 | 5 | 5 | 2 |
| Մշակութային | 3 | 2 | 5 | 4 | 3 | 5 |
| Սեռական | 5 | 5 | 5 | 5 | 3 | 5 |
| Սեռական | 5 | 5 | 3 | 4 | 5 | 2 |
| Սեռական | 0 | 1 | 5 | 5 | 4 | 3 |

Արդյունքում անհայտ է դառնում, որ կայքերում հրապարակված նյութերը առավել չեզոք ձևակերպումներ են տալիս երևույթներին՝ խուսելով հեղինակի դիրքերից: Մինչդեռ ֆեյսբուքյան մեկնաբանություններում այդ նույն հրապարակման մեկնաբանություններում նշվում են մեծ քանակությամբ ատելության խոսք պարունակող տեքստեր՝ տարբեր հեղինակների կողմից: Ընդ որում, այդ տեքստերը չեն անցնում որևէ գրաքննություն, չեն ճանաչում ցենզուրայի սահմաններ՝ մինչդեռ կայքերում նյութերի մեծ մասում այս խնդիրները չեզոքացված են: Կայքերի նյութերում ատելության խոսք պարունակող տեքստերը հիմնականում ուղիղ մեջբերումների տեսքով են, երբ հղվում են կոնկրետ անձի մտքին և ինչ-որ չափով դուրս մղվում հեղինակի պատասխանատվությունից:

Կայքերում հրապարակված նյութերի և վերջիններիս ֆեյսբուքյան էջերում գրառումների մեկնաբանությունների դիտարկումը նախապես մտածված էր՝ նպատակ ունենալով հասկանալ տեղեկություն հաղորդող նյութերում ատելության խոսքի և երիտասարդների գրառումներում ատելության խոսքի միջև ծավալի և բնույթի տարբերությունները:

Յուրաքանչյուր ոլորտում կայքերի նյութերի և ֆեյսբուքյան մեկնաբանությունների տարբերությունները առավել ակնհայտ դարձնելու համար, վերլուծությունը կիրականացվի ոլորտային տրամաբանությամբ՝ յուրաքանչյուր ոլորտի համար ներկայացնելով նախ կայքի նյութերի համապարփակ վերլուծական հատվածը, այնուհետև ֆեյսբուքյան մեկնաբանությունների վերլուծական պատկերը:

Առհասարակ, ատելության խոսքը ուսումնասիրելիս կան մի քանի կարևոր կոմպոնենտ, որոնք ամբողջական են դարձնում ատելության խոսքի ընկալումը վերլուծական տեսանկյունից: Մասնավորապես՝ կարևոր է ինքնին բովանդակությունը, որից երևում է, օրինակ, թեթև վիրավորական խոսք է, թե բռնության կոչ: Կարևոր է տեքստը գրելու մտադրությունը, քանի որ նույն բառը տարբեր մտադրությամբ գրելիս մի դեպքում կարող է լինել սովորական խոսք, մյուս դեպքում՝ ատելության խոսք: Բացի, այդ, ինչպես արդեն նշվել է, կարևոր է թիրախը, ում հասցեագրված է ատելության խոսքը: Ինչպես նաև հարկ է հաշվի առնել կոնտեքստը, որում հնչում է ատելության խոսքը: Եվ իհարկե կարևոր է նաև պոտենցյալ ազդեցությունը, որը որոշ դեպքերում հայտնի է, որոշ դեպքերում՝ ոչ: Ազդեցությունը հիմնականում կախված է ատելության խոսքի բնույթից, ազդվող անձից և այլն: Այս է պատճառը, որ որոշ մտքեր, որոնք որպես ատելության խոսք ուսումնասիրվել են հետազոտության շրջանակներում այլ պայմաններում չէին դիտարկվի որպես այդպիսին: Այլ կերպ ասած՝ տվյալ միտքը ամբողջական է դառնում նշված կոմպոնենտները հաշվի առնելով և դրա արդյունքում միայն դառնում ատելության խոսք:

Ատելության խոսքը կատեգորիզացնելու համար ձևավորվել է 2 չափումից բաղկացած մոդել, որի հիմքում ընկած են մի քանի հասկացություն:

Նախ ատելություն խոսքը տեքստերում կարող են որակվել իրենց ուժգնության չափով որպես անպատիվ խոսք, վիրավորանք կամ հայհոյանք, որոնք տարբեր ուժգնության են՝ թույլից ուժեղ:

Միևնույն ժամանակ, հնարավոր է հասկանալ ֆենոմենի պատճառները և դինամիկան, որի միջոցով բովանդակության որոշ տիպեր տանում են խտրականության, թշնամության, բռնության [Gagliardone, Iginio; Gal, Danit; Alves, Thiago; Martinez, Gabriela (2015). Countering Online Hate Speech]:

Ատելության խոսքը կատեգորիզացնելիս հարկավոր է հաշվի առնել այս 2 չափումներն են, ընդ որում՝ նույն ատելության խոսքը կարող է դրսևորվել թե՛ տարբեր ուժգնությամբ, թե՛ ունենալ տարբեր բովանդակություն: Օրինակ՝ որևէ ատելության խոսք կարող է պարունակել թշնամություն և լինել հայհոյանք:

Բացի այդ, դիտարկվել են նաև ատելության խոսքի տարբեր դրսևորումների և «Այլ (կոնտեքստային)» տարբերակի խաչման դեպքերը, որում խմբավորվել են այն տարբերակները, որոնք հստակորեն չեն եղել խտրականություն, թշնամություն կամ բռնություն արտահայտող մտքեր, այլ ունեցել են նեղ, կոնտեքստային մեկնաբանում: Կոդավորումն իրականացվել է խաչաձև՝ հաշվի առնելով 2 չափումները՝

| | Անպատիվ խոսք | Վիրավորանք | Հայհոյանք |
|---|---|---|---|
| Խտրականություն | 1 | 5 | 9 |
| Թշնամություն | 2 | 6 | 10 |
| Բռնություն | 3 | 7 | 11 |
| Այլ (կոնտեքստային) | 4 | 8 | 12 |

Արդյունքում, «1» կոդը տրվել է այն դեպքում, երբ ատելության խոսքը դրսևորվել է անպատիվ խոսքի տեսքով և պարունակել խտրականություն, «2» կոդը տրվել է այն դեպքում, երբ անպատիվ խոսքը պարունակել է թշնամություն, «3»-ը՝ անպատիվ խոսքը պարունակել է բռնություն և այդպես շարունակ նաև մյուս կատեգորիաների համար՝

1. անպատիվ խոսք – խտրականություն
2. անպատիվ խոսք – թշնամություն
3. անպատիվ խոսք – բռնություն
4. անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային)
5. վիրավորանք – խտրականություն
6. վիրավորանք – թշնամություն
7. վիրավորանք – բռնություն
8. վիրավորանք – այլ (կոնտեքստային)
9. հայհոյանք – խտրականություն
10. հայհոյանք – թշնամություն
11. հայհոյանք – բռնություն
12. հայհոյանք – այլ (կոնտեքստային)

Ընդհանուր առմամբ, կայքերում և ֆեյսբուքում կոդավորվել են հետևյալ քանակությամբ ատելության խոսք պարունակող մտքեր՝

| Azatutyun.am | | Civilnet.am | | Factor.am | | Armtimes.com | | News.am | | Tert.am | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կայք | ֆբ | կայք | ֆբ | կայք | ֆբ | կայք | ֆբ | կայք | ֆբ | կայք | ֆբ |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքական | 5 | 13 | 2 | 5 | 5 | 7 | 4 | 0 | 4 | - | 5 | 12 |
| Քաղաքական | 4 | - | 3 | 9 | 3 | 9 | 4 | 40 | 3 | 21 | 2 | 0 |
| Քաղաքական | 5 | - | 5 | 0 | 5 | 14 | 5 | - | 3 | 8 | 3 | - |
| Կրոնական | 5 | - | 5 | 17 | 2 | 0 | 5 | 8 | 2 | 9 | 3 | 6 |
| Կրոնական | 5 | - | 5 | 3 | 3 | 6 | 5 | 1 | 3 | 0 | 3 | 13 |
| Կրոնական | 4 | - | 2 | 0 | 3 | 6 | 5 | 3 | 4 | 15 | 4 | - |
| Մշակութային | 3 | 9 | 4 | 0 | 5 | 1 | 3 | 1 | 5 | 3 | 5 | 13 |
| Մշակութային | 3 | - | 2 | 1 | 3 | 0 | 5 | 0 | 5 | 5 | 2 | 2 |
| Մշակութային | 3 | - | 2 | 8 | 5 | 0 | 4 | 1 | 3 | 0 | 5 | 0 |
| Սեռական | 5 | - | 5 | 19 | 5 | - | 5 | 11 | 3 | 15 | 5 | 2 |
| Սեռական | 5 | - | 5 | 0 | 3 | 8 | 4 | 6 | 5 | 2 | 2 | 7 |
| Սեռական | 0 | 11 | 1 | 15 | 5 | 0 | 5 | 0 | 4 | 15 | 3 | 0 |

Այժմ անդրադառնանք կայքերի գրառումների և վերջիններիս ֆեյսբուքյան մեկնաբանությունների արդյունքներին՝ յուրաքանչյուր ոլորտում առանձին: Ամեն ոլորտի համար դիտարկվել են նախ կայքում տվյալ ոլորտի բոլոր հրապարակումների կոդավորված ընդհանրական պատկերը, այնուհետև նույն պատկերը ամեն կայքի համար առանձին-առանձին: Յուրաքանչյուր կայքի համար ներկայացվել են նաև ատելության խոսք պարունակող մտքերի օրինակներ: Այնուհետև յուրաքանչյուր ոլորտի դեպքում ընդհանրական պատկերը գրաֆիկի տեսքով ներկայացված է նաև ֆեյսբուքյան գրառումների մեկնաբանությունների համար, որին հաջորդում է նաև յուրաքանչյուր կայքի ֆեյսբուքյան էջում առկա իրավիճակը: Ֆեյսբուքյան մեկրնաբանությունների դեպքում, բացի ատելության խոսք պարունակող մտքերի օրինակներից, նաև ներկայացված է այդ մտքերի հեղինակների սեռային բաշխվածությունը:

***Քաղաքական ոլորտ***

Դիտարկելով կայքերում քաղաքական ոլորտին վերաբերող նյութերի ներքո արված գրառումները արձանագրվել է հետևյալ ընդհանրական պատկերը՝




Այս գրաֆիկում պատկերված է բոլոր կայքերում դիտարկված բոլոր քաղաքական ոլորտի գրառումների պատկերը: Միևնույն ժամանակ, անդրադառնանք, թե յուրաքանչյուր կայքում պատկերն ինչպիսին է՝ առանձին վերցրած:

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 0 | 1 | 0 | 0 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 2 | 2 | 1 | 5 | 5 | 1 |
| անպատիվ խոսք – բռնություն | 1 | 2 | 0 | 4 | 1 | 1 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 3 | 2 | 2 | 3 | 1 | 1 |
| վիրավորանք – խտրականություն | 1 | 1 | 0 | 0 | 1 | 0 |
| վիրավորանք – թշնամություն | 1 | 1 | 5 | 0 | 1 | 1 |
| վիրավորանք – բռնություն | 3 | 1 | 0 | 0 | 0 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 3 | 1 | 4 | 1 | 1 | 4 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Azatutyun.am-ի պարազայում հիմնականում գործ ունենք «վիրավորանք – թշնամություն», «անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային)», «վիրավորանք – այլ (կոնտեքստային)» տարբերակների հետ: Օրինակներից երևում է կոնտեքստայնությունը՝ սզյուչյոնկա-տուշոնկա, քֆուր տալ, ջարդել, սպանել և այլն:

Civilnet.am – ի դեպքում ամենաշատը հանդիպում են «անպատիվ խոսք- թշնամություն», «անպատիվ խոսք- բռնություն», «անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային)» տարբերակները: Ատելության խոսքի օրինակներում կարելի է նշել ասֆալտին պառկեցնել, տուշոնկաներ, զավթում, կամակատար և այլ բառեր:
Factor.am –ում իսկայական առավելություն ունեն «վիրավորանք –թշնամություն» և «վիրավորանք – այլ (կոնտեքստային)» տարբերակները: Արժանահիշատակ են գռեհիկ, խուլիգան, զզվելի, անբարո և այլ բառեր:
Armtimes.com-ի դեպքում հիմնականում հանդիպում են «անպատիվ խոսք- թշնամություն», «անպատիվ խոսք – բռնություն» և «անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային)» տարբերակները: Վերջինների շարքում են քաշքշուկ, ծեծել, շանտաժ, բղավել, սպառնալիք և այլ բառեր:
News.am-ի պարազայում ակնհայտ գերակշռում են «անպատիվ խոսք-թշնամություն» արտահայտող բառերը՝ փայ մտնել, նալոգ դնել, լարած թակարդ և այլն:
Tert.am – ի դեպքում հիմնականում հանդիպում են «վիրավորանք – այլ (կոնտեքստային)» բառեր, որոնց շարքում են լոլո, թափթփուկ և այլ բառեր:

Ինչ վերաբերում է քաղաքական ոլորտի գրառումների ֆեյսբուքյան մեկնաբանություններին, ապա ընդհանրական պատկերը հետևյալն է՝




Դիտարկենք նաև յուրաքանչյուր կայքի պարագայում առանձին-առանձին։

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 2 | 0 | 1 | 1 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 0 | 2 | 0 | 4 | 3 | 0 |
| անպատիվ խոսք – բռնություն | 0 | 3 | 1 | 4 | 0 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 0 | 2 | 6 | 7 | 11 | 1 |
| վիրավորանք – խտրականություն | 2 | 0 | 1 | 4 | 3 | 3 |
| վիրավորանք – թշնամություն | 3 | 2 | 8 | 6 | 5 | 3 |
| վիրավորանք – բռնություն | 3 | 1 | 1 | 3 | 1 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 5 | 1 | 11 | 7 | 3 | 5 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 | 0 | 2 | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 1 | 0 | 2 | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 | 2 | 0 | 2 | 0 |

Azatutyun.am-ի դեպքում գործ ունենք այնպիսի մեկնաբանությունների հետ, ինչպիսիք են՝ մոռթին վրիցդ կհանեն, հետ կտշեն, շակալ ծախված տխմար և այլն: Մեկնաբանությունների սեռային բաշխվածությունը ըստ կոդավորման տարբերակների հետևյալն է՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – բռնություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 |
| վիրավորանք – խտրականություն | 1 | 1 |
| վիրավորանք – թշնամություն | 2 | 1 |
| վիրավորանք – բռնություն | 0 | 3 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 2 | 3 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 |

Civilnet.am-ի պարագայում հանդիպում են ատելության խոսք պարունակող արտահայտություններ՝ թալան, բռնապետ, ինչպես տատս էր ասում՝ չոր քաքը փեշին չի կպնում, գլուխը պոկել և այլն: Մեկնաբանությունների բաշխվածությունը ըստ սեռի՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 2 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 1 | 1 |
| անպատիվ խոսք – բռնություն | 3 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 0 | 2 |
| վիրավորանք – խտրականություն | 0 | 0 |
| վիրավորանք – թշնամություն | 0 | 2 |
| վիրավորանք – բռնություն | 0 | 1 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 1 | 0 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 1 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 |

Factor.am-ի դեպքում հանդիպում են այնպիսի մեկնաբանություններ, ինչպիսիք են՝ վիժվածք, ազգի դավաճաններ, տականքներ, դեբիլ ժպիտ, աշոծյան եղի, աչքդ էլ հանում են և այլն: Անդրադառնալով սեռային բաշխմանը՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – բռնություն | 1 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 5 | 1 |
| վիրավորանք – խտրականություն | 0 | 1 |
| վիրավորանք – թշնամություն | 4 | 4 |
| վիրավորանք – բռնություն | 1 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 5 | 6 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 2 |

Armtimes.com-ում հանդիպում են լիրբ, ազգի տականք, քֆրտել, գող, քնձռոտ և այլ ամենատարբեր ատելության խոսք արտահատող բառեր: Դրանց բաշխումը ըստ սեռերի հետևյալն է՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 1 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 4 | 0 |
| անպատիվ խոսք – բռնություն | 4 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 4 | 4 |
| վիրավորանք – խտրականություն | 4 | 0 |
| վիրավորանք – թշնամություն | 5 | 1 |
| վիրավորանք – բռնություն | 0 | 3 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 6 | 1 |
| հայհոյանք – խտրականություն | 2 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 2 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 |

News.am-ի դեպքում ատելության խոսք պարունակող արտահայտությունների շարքում կարելի է թվել Մանվել կոչեցյալ, տուֆտա, սատկել, անթասիբ, շան տեղ դնող չկա և այլն: Սեռային բաշխվածությունը աղյուսակում՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 1 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 2 | 1 |
| անպատիվ խոսք – բռնություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 7 | 4 |
| վիրավորանք – խտրականություն | 2 | 1 |
| վիրավորանք – թշնամություն | 2 | 3 |
| վիրավորանք – բռնություն | 1 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 0 | 3 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 1 | 1 |

Tert.am-ի դեպքում հանդիպում են սոված շուն, խռխռան, աբիժնիկ, լափող և այլ բառեր: Սեռերի միջև բաշխվածությունը ստորև՝

| | իգական | արական |
|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – բռնություն | 0 | 0 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 0 | 1 |
| վիրավորանք – խտրականություն | 1 | 2 |
| վիրավորանք – թշնամություն | 2 | 1 |
| վիրավորանք – բռնություն | 0 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 0 | 5 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 |

Կայքերի զրառումների և ֆեյսբուքյան մեկնաբանությունների համեմատական պատկերը քաղաքական ոլորտի համար դիտարկելիս տեսնում ենք, որ երկուսի պարագայում էլ

գերակշռում են «վիրավորանք – այլ (կոնտեքստային)» և «անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային)» արտահայտությունները, միևնույն ժամանակ, կայքերում նաև հաճախ են հանդիպում «անպատիվ խոսք – թշնամանք» նշանակող բառերը, իսկ ֆեյսբուքյան մեկնաբանություններում՝ «վիրավորանք – թշնամանք» նշանակողները։

### *Կրոնական ոլորտ*

Դիտարկելով կայքերում կրոնական ոլորտի գրառումները՝ ընդհանրական պատկերը հետևյալն է՝




Այս գրաֆիկում պատկերված է բոլոր կայքերում դիտարկված բոլոր կրոնական ոլորտի գրառումների պատկերը։ Միևնույն ժամանակ, անդրադառնանք, թե յուրաքանչյուր կայքում պատկերն ինչպիսին է՝ առանձին վերցրած։

| | Azatutyun.am | Civilnet.am | Factor.am | Armtimes.com | News.am | Tert.am |
|---|---|---|---|---|---|---|
| անպատիվ խոսք – խտրականություն | 0 | 1 | 1 | 3 | 1 | 0 |
| անպատիվ խոսք – թշնամություն | 1 | 0 | 3 | 0 | 2 | 1 |
| անպատիվ խոսք – բռնություն | 10 | 7 | 0 | 6 | 1 | 5 |
| անպատիվ խոսք – այլ (կոնտեքստային) | 2 | 3 | 1 | 6 | 5 | 4 |
| վիրավորանք – խտրականություն | 1 | 1 | 1 | 0 | 0 | 0 |
| վիրավորանք – թշնամություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| վիրավորանք – բռնություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| վիրավորանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 | 2 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – խտրականություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – թշնամություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – բռնություն | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| հայհոյանք – այլ (կոնտեքստային) | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |

Azatutyun.am-ի պարագայում հիմնականում գործ ունենք «անպատիվ խոսք-բռնություն» կատեգորիայի հետ, օրինակ՝ սպառնալիք, վտանգ, շրջափակված, քաշքշել և այլն:
Civilnet.am –ի դեպքում կրկին ամենից հաճախ հանդիպում են «անպատիվ խոսք-բռնություն» արտահայտող բառեր, ինչպիսիք են՝ծեծկռտուք, խուլիգանություն, ընդվզում, անհանգստություն և այլն:
